Աշխարհագրություն-2017թ.
Դպրոցական փուլ
/տևողությունը 120 րոպե/
10-րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ո՞ր պնդումն է ճիշտ.
   1. Արեգակնային համակարգում բոլոր մոլորակներն ունեն աշխարհագրական թաղանթ,
   2. Ուղեծրի հարթության նկատմամբ երկրագնդի առանցքի թեքության աստիճա_ նային մեծությունը համապատասխանում է բևեռային շրջագծերի աստիճա_ նային մեծությանը,
   3. Արեգակի ճառագայթները նույն պահին, աշխարհագրական տարբեր լայնություններում, ընկնում են նույն անկյան տակ,
   4. Հարավային արևադարձի վրա հունիսի 22 – ին Արեգակի ճառագայթները Երկրի մակերևույթի վրա ընկնում են ուղիղ անկյան տակ:
2. Արեգակի ճառագայթների անկման անկյունը Պրահա քաղաքում (հս. լ. 50^0) դեկտեմբերի 22 – ին, կեսօրին կազմում է.
   1. 16.5^0, 2. 40^0, 3. $50,5^0$, 4. $63,5^0$:
3. Երկու կետերի իրական հեռավորությունը 240 կմ է: Դրանց հեռավորությունը 1 : 600 000 մասշտաբի քարտեզում կլինի.
   1. 0,4 սմ, 2. 4 սմ, 3. 40 սմ, 4. 400 սմ:
4. Արարատ լեռան ստորոտին, 850 մ բարձրության վրա մթնոլորտային ճնշումը հավասար է 675 մմ սնդիկի սյան: Մթնոլորտային ճնշումը գագաթին կլինի.
   1. 90 մմ, 2. 363 մմ, 3. 430 մմ. 4. 244 մմ:
5. Աշխարհագրության արդի խնդիրներից չէ (չեն).
   1. երևույթների բացատրությունները,
   2. երևույթների առաջացման պատճառների պարզաբանումները,
   3. հայտնագործությունները և աշխարհի նկարագրությունը,
   4. երևույթների հետևանքների կանխատեսումը:
6. Ընտրել պետությունների ճիշտ շարքն՝ ըստ տարածքի մակերեսի նվազման հաջորդականության.
   1. Կանադա, Չինաստան, Ավստրալիա, Հնդկաստան,
   2. Բրազիլիա, Թուրքիա, Իրան, Ֆրանսիա,
   3. Ռուսաստան, Չինաստան, Արգենտինա, ԱՄՆ,
   4. Ուկրաինա, Ինդոնեզիա, Ճապոնիա, Ղազախստան:

7. Ո՞ր շարքում են տրված ժողովուրդները խոսում տարբեր լեզվախմբերին պատկանող լեզուներով.
   1. հույները, բուլղարները, ֆիններ,
   2. պարսիկները, քրդերը, տաջիկները,
   3. անգլիացիները, շվեդները, գերմանացիները,
   4. իսպանացիները, պորտուգալացիները, բրազիլացիները:
8. Ո՞ր պնդումն է սխալ.
   1. Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ՀՀ արդյունաբերական խոշոր ձեռնարկություններից մեկն է,
   2. ՀՀ մետաղաձուլության համալիրի բոլոր ենթաճյուղերն ունեն տեխնոլոգիական ավարտուն ցիկլ,
   3. մինչև 1988թ. Ալավերդու պղնձաձուլարանը տարեկան արտադրում էր 30-40 հազ. տ. մաքուր՝ ռաֆինացված պղինձ,
   4. մետաղաձուլական համալիրը ՀՀ տնտեսության կառուցվածքում առաջատար դիրք ունի:
9. Հայկական լեռնաշխարհի միջլեռնային գոգավորությունների անվանումների և դրանց բնութագրերի համապատասխանությունը ո՞ր շարքում է տրված.

   ա. Բասենի դաշտ — 1. Այստեղ են միախառնվում Արևելյան և Արևմտյան Եփրատները:Այստեղ է Քեբանի խոշոր ջրամբարը:

   բ. Երզնկայի դաշտ — 2. Արևմտյան Եփրատի վերնագավառում, 1800-2000 մ բարձրության վրա դաշտի հատակը հարթ է:

   գ. Կարնո դաշտ — 3. Տարածվում է Արաքսի վերին հոսանքի ավազանում և ծածկված է բերրի սևահողերով:

   դ. Խարբերդի դաշտ — 4. Լեռնաշխարհի երկրաշարժավտանգ շրջաններից է և տարածվում է Արևմտյան Եփրատի միջին հոսանքում:

   1. ա – 1, բ – 3, գ – 2, դ – 4
   2. ա – 3, բ – 4, գ – 1, դ – 2
   3. ա – 1, բ – 4, գ – 2, դ – 3
   4. ա – 3, բ – 4, գ – 2, դ – 1:
10. Հիմնականում ներմուծվող հումքի և վառելիքի հիման վրա պողպատ արտադրող երկրներն են.
   1.ԱՄՆ - ը և Ուկրաինան, 2. Չինաստանը և Ռուսաստանը,
   2.Լեհաստանը և Բրազիլիան, 3.Ճապոնիան և Իտալիան:
11. Ո՞ր երևույթն է կոչվում ՛՛քիմիական արտադրության արտահանում՛՛.
   1. քիմիական արտադրանքը արդյունաբերության այլ ճյուղերում օգտագործելը,
   2. քիմիական արդյունաբերության ապրանքների արտահանումը,
   3. զարգացած երկրների քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները զարգացող երկրներում տեղաբաշխելը,
   4. քիմիական արդյունաբերության որոշ ճյուղերի և արդյունաբերության այլ ճյուղերի հետ համատեղ միջճյուղային համալիրների ստեղծումը:

12. ՀՀ – ում քիմիական արդյունաբերության զարգացման նախադրյալ չէր.
    1. բնական գազի ներմուծումը,
    2. պղնձաձուլության պրոցեսում անջատված գազերն ու նյութերը,
    3. սև մետաղների ներմուծումը,
    4. քիմիական արտադրանքի նկատմամբ մեծ պահանջարկը:
13. Տրվածներից ո՞րը Մեծ Բրիտանիայի պատմական մարզերից չէ.
    1. Ուելսը, 2. Շոտլանդիան, 3. Իսլանդիան, 4. Անգլիան:
14. Ռացիոնալ բնօգտագործման օրինակ է.
    1. անտառանյութի փոխադրումը խոշոր գետերով,
    2. անտառների հատման միջոցով արոտավայրերի ընդարձակումը,
    3. օգտակար հանածոների նոր հանքավայրերի շահագործումը,
    4. հումքի երկրորդային շահագործումը:
15. ԷՂՀ – ի մասին ո՞ր պնդումն է ճիշտ.
    1. ուրբանիզացման մակարդակը 70 % է,
    2. բնակեցման հիմնական գոտին տարածվում է 2000–2500մ բարձրություններում
    3. բնակչության միջին խտությունը 12 մարդ/կմ^2 է,
    4. գյուղական բնակչությունն առավել խիտ է երկրի արևմուտքում:

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 300 մմ է, օդի ջերմաստիճանը՝ -8^0, իսկ ստորոտին՝ +7^0: Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան ստորոտին (հաշվարկը կատարել 5^0 - ով):
17. Երկու քաղաքներ գտնվում են հասարակածի վրա: Նրանցից մեկը գտնվում է արմ. ե. 100^0 – ի, իսկ մյուսը՝ արլ. ե. 120^0 – ի վրա: Որոշել նրանց միջև ամենակարճ հեռավորությունը աստիճանով:
18. Երկրի բնակչության թիվը 30 մլն. է, մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը՝ 300 000: Որոշել ծնելիության գործակիցը ‰ – ով:
19. Երկրի երկաթուղային տրանսպորտով տարեկան փոխադրվում է 8 մլն. տ. բեռ, իսկ բեռնաշրջանառությունը կազմում է 640 մլն. տ.կմ: Որքա՞ն կկազմի բեռների փոխադրման միջին հեռավորությունը:
20. Երկրի տրանսպորտային ուղիների երկարությունը 120 000 կմ է, իսկ երկրի տարածքը՝ 30 000 կմ^2: Որոշել տրանսպորտային ցանցի խտությունը: